ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

18.05.2021թ.
ժամը 14^{30}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
- ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ պետի տեղակալ Ա. Մուրադյանը,
գնահատողներ՝
- ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ ԱԲՖԿ ծառայության պետ Ա. Պապյանը,
- ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲՎ ՁԲՖ ՇԲ առաջատար մասնագետ Ռ. Չաթոյանը,
հանձնաժողովի քարտուղար՝
ՀՀ ՊՆ ԳԿ վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ Մ.Ամիրյանը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Տեղեկատվություն «**ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16**» ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում կազմակերպված բանակցությունների վարման մասին.
2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «**ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16**» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկատվություն «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16» ծածկագրով ԳՀ ընթացակարգի շրջանակներում կազմակերպված բանակցությունների վարման մասին.

(Մ.Ամիրյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ 13.05.2021թ.ին տեղի ունեցած նիստին՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները և քանի որ «**ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16**» ծածկագրով ընթացակարգի 1-ին, 5-րդ, 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 15-րդ չափաբաժինների մասով ներկայացված գները գերազանցում էին այդ չափաբաժինների համար նախատեսված ֆինանսական միջոցները, գնահատող հանձնաժողովը որոշեց վերոնշյալ չափաբաժիններին հրավերի պահանջներին բավարարող հայտ ներկայացրած բոլոր մասնակիցների հետ **18.05.2021թ. ժամը 14:30**-ին, ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում (ք. Երևան, Բագրևանդի 5) կազմակերպել բանակցություններ:

Հանձնաժողովի քարտուղարը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցեց մասնակիցներին կազմակերպվելիք բանակցությունների վերաբերյալ:

18.05.2021թ. Ծանուցված մասնակիցներից բանակցություններին ներկայացել է «Տոդոս-Ակա» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, ով բանակցության արդյունքում ընթացակարգի 8-րդ չափաբաժնի /փական՝ գնդաձև (Գնդաձև փական D 15)/ մասով ներկայացրել է նոր գնային առաջարկ՝ **392 000 ՀՀ դրամ-ի** չափով:

Բանակցության ժամկետի ավարտին մյուս մասնակիցների հայտերով ներկայացված գները մնացել են անփոփոխ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 **24.05.2021թ.** հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի կողմից էլեկտրոնային գնահատման արդյունքները՝ «**ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16**» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ, ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի ընտրված մասնակիցներ ճանաչվեցին.

2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով՝ **«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**-ն,

8-րդ և 9-րդ, չափաբաժինների մասով՝ **«Տոդոս-Ակա» ՍՊԸ**-ն,

Հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտ ներկայացրած մյուս մասնակիցները հայտարարվեցին հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակիցներ:

Գնահատող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի է պարբերության պահանջները և քանի որ ընթացակարգի 1-ին, 10-12-րդ և 15-րդ չափաբաժիններով ներկայացված գները բանակցության արդյունքում դեռևս գերազանցում են նախատեսված ֆինանսական միջոցները, իսկ ընթացակարգի 14-րդ չափաբաժնի մասով «Գլոբալ-Շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գանահատվել է անբավարար և մերժվել է, ուստի հանձնաժողովը որոշեց ընթացակարգի վերոնշյալ չափաբաժինները «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի /ոչ մի հայտ չի համապատասխանում հրավերի պահանջներին/ հիման վրա հայտարարել չկայացած:

Միաժամանակ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի /ոչ մի հայտ չի ներկայացվել/ պահանջները, որոշեց ընթացակարգի 4-րդ, 6-րդ, 7-րդ, 13-րդ և 16-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

4.3 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-10/16» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)	_____	Ա. Մուրադյան
Գնահատող	_____	Ա. Պապյան
Գնահատող	_____	Ռ. Զաթոյան
Քարտուղար	_____	Մ.Ամիրյան